ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ»[1]

Պրոֆ. ՀԱՆՍ ՎԱԼՏԵՐ ՊՈԼ (Քյոլն)

Գրքի ստեղծման պատմության մասին քիչ բան գիտենք։ Գրական ժառանգությունը գտնվում է Կալիֆորնիայում։ Նամակները և օրագրերը չեն հրապարակված։ Կենսագրությունը չկա։ Բայց մեզ հայտնի է, թե ինչ դեպք է խթան հանդիսացել։ Վեպի առաջին հրատարակության վերջաբանում, որից քաղվածք է բերել էդ. Թոփչյանը, ասված է. Դամասկոսում ամուսինները այցելում են մի գորգագործարան. «Գորգագործարանում աշխատող գաղթական խեղանդամ ու սովալլուկ մանուկների թշվառ վիճակը վճռական խթան հանդիսացավ՝ ամբողջ իրադարձության մեռյալ թագավորությունից դուրս բերելու հայ ժողովրդի անըմբռնելի ճակատագիրը» (Ֆրանց Վերֆել, «Մուսա լեռան քառասուն օրը, գերմաներենից թարգմանեց՝ Պարույր Միքայելյան, Երևան, 1964։ Առաջաբան, էջ IV)։

Այդ ճանապարհորդությունից հետո Վերֆելն աշխատում էր մեկ այլ վեպի վրա։ 1933 թ. լույս տեսավ «Barbara oder die Frömmigkeit» *(«Բարբարան և հնազանդությունը») վեպը՝ պատերազմից հետո Վիեննայի մտավորականների միջավայրի «հասարակ մարդու» մասին։ Բայց հեղինակը Դամասկոսի տպավորությունները չէր մոռացել. եռանդուն զբաղված էր հայկական նյութերի նախապատրաստմամբ։ Սակայն, ինչպես երևում է, վեպի ստեղծման ժամանակը դեռևս չէր հասունացել։ Եվ միայն 1932 թ. է ձևավորվում պլանը։ Շարադրելը տևում է ընդամենը մի քանի շաբաթ, Զեմմերինգ լեռան վրա։*

Գրողի այրին՝ Ալմա Մահլեր-Վերֆելը պատմում է հետևյալը. «Մի անգամ մեր մեջ ծագեց քաղաքական փոքրիկ բանավեճ։ Վիճում էինք այն մասին, թե այսօր ինչ է նշանակում հերոս և հերոսություն։ Ես գտնում էի, որ հերոսը պետք է լինի այնպիսի մի փայլուն, ակտիվ անհատ, ինչպիսին էր Զիգֆրիդը։ Բայց Ֆրանցը չէր համաձայնվում։ Նա միշտ մտորումների մեջ էր. Այն օրերին մեր գործերը լավ չէին ընթանում։ Շատ հոգսեր ունեինք։ Եթե որևէ հրաշք չպատահեր՝ մենք պետք է նույնիսկ վաճառեինք մեր տունը։ Բայց հաջորդ օրը նա հանկարծ ամենաբարձր տրամադրությամբ մոտեցավ ինձ և ասաց. գիշերն իմ մեջ մի միտք ծագեց... Եվ նա սկսեց ինձ բացատրել, որ պատկերելու է մի հերոսի, այնպես, ինչպես ինքն է պատկերացնում։ Նա կամենում էր պատմել հայկական կոտորածների պատմությունը, որ լսել էր 1929 թ. Դամասկոս կատարած մեր ճանապարհորդության ժամանակ։ Այն ժամանակ էր, որ նա առաջին անգամ տեսավ այդ դաժանությունների զոհերին՝ գործվածքային գործարանի երեխաներին, որոնց ծնողներին սպանել էին։ Այդ տպավորությունները ամուսինս երբեք չէր մոռանում։ Դեռևս այն ժամանակ նա

---

[1] *Զեկուցված է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում 1973 թ. ապրիլի 25-ին։ Գերմաներենից հայերեն է թարգմանել և հրատարակության պատրաստել Գ. Վ. Արգարյանը։*

կամենում էր գրել այդ մասին, բայց կայծը դեռ կրակ չէր դառնել։ Եվ այժմ, հերոսի մասին վարած մեր երեկվա բանավեճից հետո, վերջապես ձևավորվեց նրա պլանը, նրա որոշումը» (Alma Mahler-Werfel, Mein Leben, Frankfurt am Main, 1973, էջ 197—198)։

Տիկին Վերֆելը այս գրառումներն ավարտում է 1933 թ., Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց հետո, հետևյալ խոսքերով. «Այսօր կեսօրից հետո Ֆրանց Վերֆելն ավարտեց իր՝ «Մուսա լեռան քառասուն օրը» մեծ գիրքը... Այսպիսի ժամանակներում ապրող մի հալածականի համար, այս սպառնալի օրերին, նման մի երկ գրելը վիթխարի գործ է»։

Շարադրանքի արագությունն այսօր էլ նկատելի է ընթերցողին։ Այդ մասին են վկայում ոճական այն անփութությունները, որոնք հաճախ ենք հանդիպում Վերֆելի մոտ, ինչպես նաև՝ որոշ դրվագների (Ժյուլիետի սիրային արկածների) թատերական, օպերային, երբեմն էլ՝ տրաֆարետային ներկայացումները։ Մյուս կողմից էլ զգացվում է ներքին այն ճնշումը, որի տակ գրել է Վերֆելը։ Նրա գիրքը պետք է լիներ ահազանգի գիրք։ Զգայուն հեղինակը կանխազգում էր ողբերգությունն այն փոքրամասնության, որին պատկանում էր ինքը։

Այն երեք տարիներին, երբ նա զբաղված էր սակավաթիվ փոքրամասնությանն սպառնացող ցեղասպանության դեմ ուղղված դիմադրությունը նկարագրելու ծրագրերով, «համաշխարհային պատմության կշեռքը, թվում է, տատանվում էր անորոշ»(«Zwischen oben und unten»—«Վերի և վարի միջև», տե՛ս վեպի առաջաբանը)։ Վերֆելն իրեն պարտավոր էր զգում՝ իր խոսքը նժարների վրա դնելու, որպեսզի դրանով կատարի այն, ինչ նա, որպես անհատ գրող, ի վիճակի էր անելու, ճակատագրի վրա ազդելու համար։ Այդ նպատակին էին ծառայում իր դասախոսությունները, որ նա կարդում էր Գերմանիայի մեծ և փոքր քաղաքներում։ Նա Մուսա լեռան վերաբերող իր անավարտ երկից կարդում էր Լեպսիուսի և Էնվեր փաշայի երկխոսությունը։ Գերմանական հասարակայնությանը ծանոթացնում էր 1919 թ. իրադարձություններին և նախազգուշացնում Գերմանիայում Հիտլերի մոտալուտ դեսպոտիզմի մասին։ Վեպի առաջին գլուխը հատկանշական ձևով կոչված է «Մոտալուտը»։

Հարց է ծագում. մի՞թե այս ցեղասպանության պատմությունը Գերմանիայում այդքան անծանոթ էր։ Համենայն դեպս՝ լայն հասարակայնությունը հազիվ թե որևէ բան գիտեր այդ մասին։

Թուրքիան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի դաշնակիցն էր, մի կարևոր, բայց և անվստահելի դաշնակից՝ ընդդեմ Անգլիայի և ցարական Ռուսաստանի։ Ժողովրդական զանգվածներն այնքան էին տարված սեփական հոգսերով, որ իմացան ամենաշատը այն, թե տեղի է ունենալու հայերի այսպես կոչված «վերաբնակեցում» թուրքերի կողմից։ Բայց նրանք ոչինչ չիմացան այն մասին, որ այդ գործողությունը ծրագրված և կանխամտածված ոչնչացումն էր գրեթե մի ամբողջ ժողովրդի։

Ինչպես գիտենք, վեպում նկարագրված է, թե ինչպես Միջագետքի ճանապարհին դիմադրության և պայքարի է դիմում գաղթականների մի փոքրիկ խումբ, խաղաղասեր մարդկանց մի ջոկատ՝ երբեք չպատերազմած մարդկանց ղեկավարությամբ։ Այստեղ ի հայտ է գալիս Վերֆելի երկկողմանի մոտեցումը (Dilemma). նա ինքը վճռական թշնամի էր ամեն տեսակ պատե-

բաղմի, մի տոլստոյական, հետևորդը այն սկզբունքի, որի համաձայն չարին չպետք է հակառակել։ Բայց կատարվածը անխուսափելի ինքնապաշտպանություն էր։ Հոգևորականների ղեկավարության ներքո գտնվող գյուղական համայնքները գիտեին, որ իրենց հարկադիր աքսորը դեպի անապատ նշանակում էր մահ՝ սովի և ծարավի միջոցով։ Թուրքերից փախչելու և անմատչելի լեռան վրա դիմադրելու վճիռը վերջին ելքն էր։ Այս մարդկանց նահատակությունը Ֆրանց Վերֆելը վեր է հանել բանաստեղծորեն։

Մարդկային կերպարների բազմազանությունը վեպում ապշեցուցիչ է. մանավանդ, երբ դա համեմատում ենք աղբյուրների սուղ և սթափ տվյալների հետ։

Ի՞նչ աղբյուրներ է ունեցել Վերֆելը։

Յողնօլուքցի բողոքական հոգևորական Տիգրան Անդրեասյանը, Զեյթունի որբանոցներից մեկի ղեկավարը, «Der christliche Orient» («Քրիստոնեական Արևելք») փոքրիկ ամսագրում, որի խմբագիրն էր Յոհաննես Լեպսիուսը, 1916 թ. արդեն գրել էր ընդամենը 10 էջանոց մի պարզ, անպաճույճ, ազդու հաղորդում դեպքերի մասին։ Հաղորդումն այն ժամանակ գրաքննության կողմից արգելվեց։ Անփոփոխ շարադրությամբ այն կրկին հրապարակվեց 1919 թ. Լեպսիուսի «Deutschland—Armenien» («Գերմանիա—Հայաստան») վավերագրերի ժողովածուում, ապա լույս տեսավ նաև որպես գրքույկ և, ինչպես տեղեկանում ենք Հ. Պողոսյանի՝ Զեյթունի պատմության վերաբերյալ գրքից (Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 390). 1935 թ. պետք է մի անգամ էլ հայերեն թարգմանությամբ լույս տեսած լինի Հալեպում։ Երբ Վերֆելը 1929 թ. Սիրիայում էր, Անդրեասյանին, անշուշտ, չի տեսել։ Հետագայում էլ նրա հետ նամակագրություն չի ունեցել։

Բայց հավանական է, որ տեղի է ունեցել Վերֆելի հանդիպումը գրող Արմին Թ. Վեգների հետ։ Վերջինս այն ժամանակ ապրում էր Հռոմում և 1915 թ. վկա է եղել Միջագետքում թուրքերի կատարած գործերին։ Նրան է պատկանում «Der Weg ohne Heimkehr» («Ճանապարհ առանց վերադարձի») գիրքը, որը պատկերում է հայկական փոքրամասնության ճանապարհը դեպի մահ (տպագրված է 1919 թ.)։ Այս երկում տեղ գտած վավերագրերը առաջին համաշխարհային պատերազմի ամենացնցող վավերագրերից են։ Վերֆելը անկասկած ծանոթ է եղել այդ գրքին և օգտագործել է։

Սակայն վեպի կարևորագույն աղբյուրներն են հանդիսացել, անտարակույս, Յոհաննես Լեպսիուսի հաղորդումները, որոնցից Վերֆելը քաղել է գործողության բոլոր գծերը։ Լեպսիուսը վեպի երկու գլխավոր դրվագների հերոսն է։ Բայց հայտնի է, որ նա Մուսա լեռան եղելության մասնակից չի եղել։ Միայն հետագայում, 1916 թ. է նա այս ողբերգության մասին իմացել Անդրեասյանի միջոցով։ Բայց նա ինքն է հերոսը վիպական այն երկու տեսարանների, որոնք Վերֆելը առաջին և երրորդ գրքերում կոչել է «Աստվածների միջնախաղը» („Zwischenspiel der Göter“)։ Այս խորագիրը ռոմանտիկական է։ Փաստորեն աստվածային ոչինչ չի կատարվում։ Ընթերցողը հնարավորություն ունի թափանցելու եղելության վարագույրի ետևը։ Նա տեսնում է Էնվերի և Թալաաթի գաղտնի դավերի պատկերը։ Լեպսիուսը հարկադրում է թուրք ազգի այս երկու ղեկավարներին մատնել իրենց մտադրությունները։

Այստեղ ես ինձ թույլ եմ տալիս մի էքսկուրս։

Լեպսիուսը իսկապես հերոսական մի կերպար էր, եթե «հերոսը» այն անհատն է, որը հանդգնում է սեփական անձին սպառնացող վտանգի ներքո միշտ դիմագրել անարդար և գերազանց ուժին։

Լեպսիուսը ծնվել է 1858 թ.։ Զավակն է գերմանական նշանավոր մի եգիպտագետի։ Վախճանվել է 1926 թ., երբ Վերֆելը դեռևս չէր սկսել իր վեպը։ Նա Երուսաղեմում բողոքական հոգևորական էր և 1895 թ. Բեռլինում հիմնեց մահմեդականների մեջ քրիստոնեական առաքելության մի ընկերություն։ «Հենց հիմնադրության օրը,— գրել է Լեպսիուսը հետագայում,—Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ հայկական առաջին կոտորածը, որին մենք անտեղյակ էինք. դրան հաջորդեց արյան բաղնիքների մի ամբողջ շարան, որի նախաձեռնողը ինքը սուլթանն էր»։ Հիշյալ ընկերությունն այսուհետև ստանձնում է մի նոր առաջադրանք. «Կազմակերպել օգնություն անմեռ սպանված հարյուր հազարավոր հայերի և ասորիների այրիներին ու որբերին»։

Լեպսիուսը օգնում էր ոչ միայն Թուրքիայում։ Նա ձգտում էր դեպքերին տեղյակ պահել նաև գերմանական հասարակությանը։ Անում էր ամեն ինչ, որպեսզի նրան հաղորդեր թուրքերի գործունեության մասին։ Բեռլինի մամուլը սկզբում հերքում է ջարդը։ Իբր դա անգլո-ֆրանսիական զրպարտություն է։ Հետագայում խոստովանեցին, թե հայերի դեմ իրոք կիրառվել են խիստ միջոցներ, սակայն դրանք ուղղված են եղել բացառապես ընդդեմ «հայ հեղափոխականների»։

1896 թ. Լեպսիուսը, ենթարկվելով ճանապարհի վտանգներին, անձամբ ուղևորվում է Փոքր Ասիա և, ինչպես հետագայում էր գրում, ոչ մի տեղ չի տեսնում, թե հայ ազգաբնակչությունը որևէ ապստամբությամբ կամ պրովոկացիայով առիթ տար, որպեսզի թուրքական զինված ամբոխը հարձակվեր հայ համաքաղաքացիների վրա։ Նա 1896 թ. իր ճանապարհորդության մասին հրապարակեց մի գաղտնի հաղորդագրություն։ Շուտով թուրքական կառավարությունը հրամայեց նրան՝ թողնել երկիրը։

Հայերի օգնության կազմակերպումը Գերմանիայում դժվար էր. գերմանական կառավարությունը դրան լիովին բացասաբար էր վերաբերվում։ Ավետարանական եկեղեցական առաջնորդներն իրենց քաղաքականությունը նույնացրել էին կառավարական քաղաքականության հետ։ Լեպսիուսի գործը շատ դժվար էր։ Բարեկամների մի խմբի հետ նա շարունակում էր իր օգնությունը և անընդհատ հրապարակորեն քարոզում էր հօգուտ հալածական հայերի։

1896 թ. լույս տեսավ «Armenien und Europa» *(«Հայաստանը և Եվրոպան»), մի գիրք, որն ունեցել է վեց հրատարակություն և թարգմանվել է անգլերենի և ֆրանսերենի։ Նրա մեջ 1895 թ. զոհերի թիվը հաշվվում է ավելի քան 100.000։ Հասարակայնության տրամադրությունը քայլ առ քայլ փոխվում էր։*

Լեպսիուսը գործում էր հայ գաղթականների օգտին նաև Բուլղարիայում և Պարսկաստանում։ Նա իր գործունեությունը դիտում էր որպես լոկ օգնություն։ 1900 թ. նա իր նպատակը ձևակերպում էր այսպես. առաքելություն ոչ թե քարոզներով, այլ՝ արևելյան ապրելաձևերի հասկացողությամբ, ոչ մի պրոպագանդա հանուն արևմտյան քրիստոնեության, կարիքների մեղմացում, կրթություն, առաջին հերթին՝ գործնական կրթության բարձրացում, իրականացում այնպիսի տնտեսական ձևերի, որոնք կպահպանեին գաղթական համայնքների սեփական գոյությունը, ընկերությունները։ Առաքելության ընդուն-

ված մեթոդների մերժման պատճառով Լեպսիուսը սեփական եկեղեցու ղեկավարող շրջանների կողմից ենթարկվեց պարսավանքի որպես «անհավատ»։

1908 թ., երբ Գերմանիայում ամենուրեք ողջունում էին երիտթուրքական հեղափոխությունը, Լեպսիուսը տրամադրված էր սկեպտիկորեն. «Պետական կրոնը դեռևս Իսլամն է»։ Արդյոք հնարավո՞ր է, որ այսպիսի մի ժողովրդացեղա-կրոնական խառնուրդ, որ համակված է դարերից եկող թշնամանքով, արյան վրեժի քինախնդրության, ցեղամիջյան երկպառակության, ազգային ատելության և կրոնական հալածանքների հիշողություններով, հանկարծ այսպես միանգամից մաքրվի։ Հնարավո՞ր է, որ այսքան շատերի մեջ եվրոպական իրավունքի հիմունքներով ծագի մեկի փոխարեն մի համընդհանուր ազգային գիտակցություն և միավորի ժողովուրդը, բանակն ու կառավարությունը։ 1909 թ. ջարդերը ցույց տվեցին, որ Լեպսիուսն իրավացի էր։

Պատերազմի բռնկումից հետո Գերմանիա հասան նոր հաղորդագրություններ հայերի հալածանքների մասին։ 1915 թ. հուլիսի 24-ին Լեպսիուսը կրկին ժամանեց Կ. Պոլիս։ 1915-ի հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ նշանավոր զրույցը էնվեր փաշայի հետ։ Լեպսիուսն այս զրույցը վերաշարադրել է իր „Der Todesgang der armenischen Volkes“ («Հայ ժողովրդի մահերթը») գրքում, որը 1916 թ. լույս տեսավ շատ սակավաթիվ տպաքանակով, հետևաբար՝ ոչ լայն հասարակայնության համար և մնաց աննկատ։ 1915 թ. վերջին գրաքննությունը բռնագրավեց նրա ամսագրի վերջին համարը, որը կրում էր հետևյալ վերտառությունը. «1,5 միլիոն հայեր, աննկարագրելի կարիքների մեջ, քշված են Միջագետքի անապատները կամ էլ ճանապարհին են»։

1916 թ. հուլիսին Լեպսիուսը թողեց Գերմանիան և գնաց չեզոք Հոլանդիա։ Նրա գրքի վերջին օրինակները բռնագրավվեցին։ Գերմանիա վերադարձավ միայն 1918-ի նոյեմբերյան հեղափոխությունից հետո։ 1919 թ. լույս տեսավ վավերագրերի այն ժողովածուն, որը օգտագործել է Վերֆելը և որը այսօր էլ առաջնակարգ պատմական սկզբնաղբյուր է։

Ո՞րն է պատճառը, որ կայսերական կառավարության կողմից ոչ մի պաշտպանություն տեղի չունեցավ։ Այս հարցին չի կարող լինել ավելի լավ պատասխան, քան այն բացատրությունը, որը 1918 թ. օգոստոսի 5-ին Անդրկովկասի գերմանական ներկայացուցիչ, գեներալ Կրեսսը տվեց կաթողիկոսին. «Գերմանիան չի կարող հայերի համար փորձության ենթարկել իր դաշինքը Թուրքիայի հետ»։

Լեպսիուսի փաստարկումները էնվեր փաշայի հետ ունեցած զրույցի ժամանակ հենվել են այն համոզմունքի վրա, որ պատերազմը նույնպես անսահման բռնությունների գործադրման իրավունք չի տալիս և որ պատերազմի ժամանակ նույնպես փոքրամասնություններին պաշտպանելու մարդկային օրենքը պետք է ուժի մեջ լինի։

էնվեր փաշան Վերֆելի մոտ պետության ներկայացուցիչ է, որը հետևվում է այն սկզբունքին, որ նույնիսկ կարծեցյալ վտանգը բավական է, որպեսզի ոչնչացվի պետական ազգին չպատկանող մի փոքրամասնություն։

Վերֆելն այստեղ հեռացել է էնվեր փաշայի մասին Լեպսիուսի հաղորդածից։ Վերֆելի կերտած դիմանկարը որոշակի նման է անգութ, անողոք և անտարբեր, «սառն արկտիկական դեմքեր ունեցող» ղեկավար անձնավորու-

թյուններին, որոնք հանդիպում էին նացիոնալ-սոցիալիստական դրականության և այն ժամանակվա շրջադարձային օրերի իրականության մեջ։

Լեպսիուսի և Էնվեր փաշայի բանավեճը 1933 թ. յուրաքանչյուր ընթերցող պետք է ընկալեր որպես վեհ մարդկայնության, բոլոր մարդկանց հավասարության համոզմունքի և ռասիզմի միջև։ Մյուս վրույցը, որը Վերֆելը նկարագրում է իր վեպի երրորդ գրքում, պատմական չէ։ Իրականում Լեպսիուսը մեկնել էր այն բանից հետո, երբ Էնվեր փաշան մերժեց օգնության կայաններ բացելու վերաբերյալ նրա խնդրանքը։ Պատմական չէ նաև վեպի պատումն այն մասին, թե Լեպսիուսը խնդրել է աքսորի հրամանը ետ վերցնել։ Լեպսիուսը չէր համարձակվի այդպիսի մի հեռուն գնացող միջամտություն կատարել։ Երկրորդ անգամ գալ նույնպես նա չէր կարող։

Վեպի նպատակի համար, սակայն, կարևոր էր պարզաբանել, որ ոչ մի դեպքում չպետք է երևան գա ուրիշ նշաններով մի ռասիզմ՝ հակաթուրքական։ Լեպսիուսը նույնպես բոլորովին թուրքատյաց չէր։ Աղա Ռիֆաաթ Բերեքեթը վեպում ներկայացնում է այն հին ժամանակը, երբ Իթթիհատը իր պետական կրոնով դեռևս փոքրամասնություններին հետապնդելու կոչ չէր արել։ Հայերի այդպիսի մի բարեկամ հանդես է գալիս նաև իրականում, Լեպսիուսի հաղորդագրության մեջ, որը և հավանաբար Վերֆելին ծառայել է որպես նախատիպ։ Դա Ահմեդ Ռիզա բեյն է։ Վեպում կան նաև բազմաթիվ այլ տեղեր, որոնք ցույց են տալիս Վերֆելի այն միտքը, թե թուրքական ամբողջ ազգաբնակչությանը, նույնիսկ բոլոր ղեկավարներին չէ, որ պետք է դատապարտել...

Աղա Բերեքեթի անձնավորությունը Վերֆելին հետաքրքրած պետք է լինի նաև իր ավստրիական հայրենիքի կապակցությամբ. մի՞թե բազմաթիվ ազգեր համեմատաբար խաղաղ չէին ապրում կրոնական մի դինաստիայի ներքո, քանի դեռ «ազգ» հասկացությունը առաջնորդող հասկացություն չէր դարձել։ Բերեքեթն ասում է, որ «ազգը» արևմտյան գյուտ է։

Երբ մենք կրկին վերադառնում ենք գլխավոր նյութին, Մուսա լեռան պայքարի պատմությանը, տեսնում ենք, որ Անդրեասյանը Արամ Թոմասյանի իրական նախատիպն է։ Նրա քույր Րսկուհին, նրա ընտանիքը, գրական կերպարներ են, որոնք կարող էին այդպես կամ նման մի ձևով ապրած լինել։ Պատմական իրականությանը համապատասխանում է դիմադրության կազմակերպման ընդհանուր նկարագրությունը և հրաշքով փրկվելու պատմությունը։ Դա իրական շրջանակն է։ Վերֆելի արվեստը այդ շրջանակի լրացման մեջ է։ Անհրաժեշտ է եղել լուսավորչական քահանա տեր Հայկազունուն պատկերել ի հակադրություն բողոքական պատվելու։ Հավասարակշռված պատկերացում է տրված ժողովրդի տարբեր խավերի՝ Արևմուտքի (Ժյուլիետ) և Արևելքի (Կիլիկյան), երիտասարդների և ծերերի, մտավորականների, հասարակ գյուղացիների և արհեստավորների, նույնիսկ ընդհանուր մակարդակից ցածր մարդկանց (Սաթո, Գևորգ) միջև։ Կերպարների այս առատության միջոցով համոզիչ է դառնում մարդկայնության պահանջը և ամբողջանում է պատկերի հարստությունը։ Թե որտեղից է Վերֆելն այս ռեալիստական մանրամասներն ունեցել, դա նրա գաղտնիքն է։ Հազիվ թե նա ծանոթ էր հայկական իրականությանը։ Գուցե նա Րաֆֆի է կարդացել։ Ես դա ընդունում եմ։

Հետաքրքիր է, որ Անդրեասյանը ոչինչ չի հաղորդում մարտնչող համայնքի որևէ ղեկավարի մասին և որ Բագրատյանը՝ գլխավոր գործող անձը,

իր ամբողջ ընտանեկան շրջապատով, Վերֆելի հնարանքն է։ Բագրատյանը տիպիկ վերֆելյան կերպար է։ Նրա ծրագիրն է՝ արևմտյան կանոնավոր կրթության միաձուլումը արևելյան ավանդույթներին։ Իվան Կարամազովին Ալյոշայի հետ կապելու, ինտելեկտն ու իմաստությունը միաձուլելու այս պրոբլեմը Վերֆելը բերել է Պրագայի գրական շրջաններից։

Վերֆելի ռեալիզմը ես գովաբանեցի։ Այդուամենայնիվ հարց է ծագում. Բագրատյանի կարգի մի մարդ կարո՞ղ էր խաղալ պարտիզանական մոտավորապես այնպիսի մի դեր, ինչպիսին խաղում էր Անդրանիկը։ Այն էլ՝ Փարիզում դաստիարակված, իր ժողովրդի հետ կապ չունեցող մի արևմտացի։ Արդյոք ռեալիստակա՞ն է այն, որ մարտնչող հայ համայնքի առաջնորդը միակ մարդն է, որ չի հասնում փրկարար նավին։ Արդյոք հոգնածությունի՞ց էր քնել-մնացել։ Որպեսզի հետագայում գնդակահարվե՞ր իր տղայի գերեզմանի վրա...

Տարօրինակ կործանումը հասկանալու համար բավարար չէ ասելը, թե այստեղ պարզապես կիրառված է գրական այն սխեման, որի համաձայն ողբերգական վեպում հերոսին վիճակված է կործանվել։ Հասկանալի է, որ այստեղ գործ ունենք մի խորհրդանշանի հետ։ Եվ սա միակը չէ վեպում։

Անդրեասյանի հաղորդման համաձայն՝ պաշարումը տևել է 35 օր։ Վերֆելը դա վերափոխել է 40 օրվա։ Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ 40 օր անձրև էր գալիս, մինչև որ Աղավնին փրկություն ավետեց Արարատի վրա· 40 օր հրեական ժողովուրդը գաղթում էր անապատով, 40 օր պաս էին պահում Մովսեսը, Եղիան, Քրիստոսը։ Դամլալիկի վեց գյուղերից Վերֆելը ստացել է յոթ համայնք։ Բագրատյանի մեջ Վերֆելը տեսնում է Մուսա լեռան վրա մի Մովսիսական կերպար։ Եվ թուրքահայերի ճակատագրի մեջ նա կարծես թե անհույս կանխատեսում է հրեական փոքրամասնության հայտնութենական (apokalyptisches) ճակատագիրը Գերմանիայում և Արևելյան Եվրոպայում։ Այդպես է նաև այն, որ երեք գրքերից յուրաքանչյուրը մեկական բնաբան ունի Հովհաննի հայտնությունից։

Ջոհի՛, անձնազոհության խորհուրդը Վերֆելի մոտ դրսևորվել է դեռևս վաղուց։ Տակավին 1911 թ. լույս տեսած և «Weltfreund» («Աշխարհաբարեկամ») կոչվող բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի մեջ գտնում ենք այս խոսքերը. «Իսկական հաղթողները պարտությունը գերադասում են հաղթանակից։ Ամենասարսափելին նա է, ով հլու հպատակվում է, ուժեղ է նա, ով ճանաչում է ինքն իրեն և ամենաուժեղը նա է, ով անձնազոհ է»։ Ահա, այստեղ է զգացվում Դոստոևսկու ազդեցությունը. իշխան Միշկինի կամ Ալյոշա Կարամազովի նախատիպը։

Բայց մենք չպետք է մոռանանք, որ Բագրատյանն իր ժողովրդին կոչ է անում ո՛չ թե կապիտուլյացիայի, այլ՝ պայքարի, մեկը մյուսի համար զոհվելու և ո՛չ թե թույլ տալու, որ իրենց կոտորեն ոչխարների նման։

Ինչպես հասկանալ այս հակասությունները հերոսի կերպարում։

Բագրատյանն զգում էր, որ առաջադրանքն արդեն կատարել էր։ Նա զոհեց իր տղային, ընտանիքը։ Փարիզյան այդ ինտելիգենտը փրկված ժողովրդի մեջ կշարունակեր մնալ որպես այն չհասկացված օտարականը, որպիսին էր նա՝ նախքան Մուսա լեռան հասարակ գյուղացիության համար պայքար սկսելը։ Բագրատյանի հոգեբանության մեջ ունենք Վերֆելի հոգեբանությունը։ Վերֆելն էլ էր ինքնատիպ մի անհատականություն։ Նա տառա-

պում էր խորթացումից։ Նա որևէ խմբի չէր պատկանում։ Դիմադրում էր հիտլերիզմին։ Հանդես էր գալիս որպես նախազգուշացնող գուշակ, բայց, ինչպես ասվեց, չէր պատկանում ոչ մի խմբի կամ կուսակցության։ Երբեք չի եղել սիոնիստ, որպիսին էին նրա շատ ծանոթները։ Ո՛չ հավատացյալ հրեա էր, ո՛չ էլ կաթոլիկ, այլ ուղղակի բուրժուական սկեպտիկ։ Այլևս այն անարխիստ արվեստագետը չէր, ինչպիսին էր նա երիտասարդ տարիներին։ Հավատում էր Դոստոևսկու և Տոլստոյի իդեալներին։

Նրա բոլոր երկերը խոսում են հասարակական որևէ գործունեություն գտնելու ջանքերի մասին։ Մոտալուտ պարտության ընթացքում մնալ հաղթող նրա համար նշանակում էր կատարել այդ առաջադրանքը, որը նրան ներկայացնում էր ժամանակը, այսինքն՝ գրել ճշմարտությունը, լինել գրող և մարգարե։

Բազմաթիվ վտանգների ներքո, օկուպացված Ֆրանսիայի վրայով կատարած դժվար փախուստից հետո Վերֆելը կնոջ հետ միասին հասավ Ամերիկա տանող նավին և հավատարիմ մնաց իր առաջադրանքին։

Վերֆելի վեպը անշուշտ սոսկ անքննադատ հիացմամբ չպետք է ընդունվի, բայց և այն հանդիսանում է ժամանակի արևմտահայերի, ինչպես նաև Լեպսիուսի և հեղինակի մնայուն հուշարձան։

«СОРОК ДНЕЙ ГОРЫ МУСА» ФРАНЦА ВЕРФЕЛЯ

Проф. ГАНС ВАЛЬТЕР ПОЛЬ (Кельн)

(Резюме)

Статья является изложением доклада, прочитанного в Институте востоковедения Академии наук Армянской ССР в апреле 1973 г. В ней освещаются некоторые стороны биографии и литературной деятельности Франца Верфеля и истории создания его широко известной книги «Сорок дней горы Муса», посвященной одному из важных периодов борьбы армянского народа против турецкого деспотизма.